600.0133.08.05.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2019 թվականի №133Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԷԼԵՈՆՈՐԱ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱԾԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1 հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և անհատ ձեռնարկատեր Էլեոնորա Սիմոնյանի 2019 թվականի ապրիլի 25-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել անհատ ձեռնարկատեր Էլեոնորա Սիմոնյանի հայտը և Կոտայքի մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրել 5590-5593ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն՝ մինչև 2029 թվականի փետրվարի 28-ը գործողության ժամկետով:

2. Հաստատել անհատ ձեռնարկատեր Էլեոնորա Սիմոնյանին Կոտայքի մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրվող 5590-5593ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Անհատ ձեռնարկատեր Էլեոնորա Սիմոնյանին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում №900005330213 հաշվեհամարով

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով տրամադրված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մայիսի 10-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք.Երևան
8 մայիսի 2019թ.